ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻՑ... ՂԱՐԱԲԱՂ

(ՆԵՐԱՆԶՆԱԿԱՆ ՄԻ ՊԱՀ ԱՐՑԱԽՈՒՄ*)

ՀԱՅՐԱԿԱՆ ԶՕՆ՝ ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Քսանվեց տարիներ են սահել անցել այն օրից, երբ ես իմ ողջ կեանքի մինչ այդ տեղուութեանը առաջին անգամ լինելով հեռու էի գտնուել իմ Եկեղեցու տոնական-ծիսական-արարողական մթնոլորտից, Վարդանանց տօնի օրը: Այն ատեն, քառորդ դար առաջ, ես գտնուում էի շատ հեռաւոր ու ինձ համար մենաւոր մի աշխարհ — Նոր Զելանդիա, ովկիանոսի անծայրածիր ջրերի մէջ կորսուած և կարծէք երկրագնդի ծայրամաս նկատուող այդ կրկնապատառ և երկարատարած կղզում:

Այդ օրուայ իմ ապրումները յանձնել էի թղթին «Վարդանանց Տօնը Նոր Զելանդիայի մէջ» խորագրի տակ, մի յուշագրական գրութեամբ, որն հրատարակուել էր հայ մամուլում և ապա հատորի կազմի մէջ էր մտել «Հող, Մարդ և Գիր» վերնագիրը կրող իմ գրքում:

Այս գիշեր քառորդ դարի հեռաւորութիւնից և յիշողութեանս բազմախաւ ենթահողից Նոր Զելանդիան 1972 թուի 8 փետրուարին իմ մէջ առաջացրած ապրումներով դուրս է գալիս և աչքերիս ծանրացող քունս վտարելու աստիճան ուժգնութեամբ լցնում է ողջ գոյութիւնս: Այն ատեն և այն վայրում ոչ մի հայ չկար իմ շուրջ: Բոլոր շրջապատս բազմազգի ու բազմալեզու ու այլամշակոյթ մարդկանցով էր լցուած, հոգևորական և աշխարհական, իւրաքանչիւրն իր աշխարհը ապրող և հասարակաց և երբեմն եկեղեցիների ու ազգերի կեանքը յուզող ու ալեկոծող հարցերով մտազբաղ: Խօսում էին, վիճում էին, փոխըմբռնման բանաձևեր էին որոնում: Ես որ առհասարակ աշխոյժ մասնակցութեամբ խառնուում էի ժողովական օրերի բոլոր նիստերին, լուռ էի այդ օրը, ինքնամփոփ, ինքնահայեաց, ինքնասոյզ իմ մտորումների մէջ: Կարծես կայի ու չկայի որպէս ժողովական անդամ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Գործադիր Մարմնի այդ նիստին:

Նոր Զելանդիայի օդն էի շնչում, բայց ապրում էի Տղմուտ գետի ափերին, Աւարայրի բաց դաշտի տեսարանով համագրաւուած, Վարդանանց ճակատամարտի մտապատկերովը նուաճուած:

Իսկ այս գիշեր այստեղ եմ, դարձեալ հեռու Եկեղեցու անմիջական մթնոլորտից, մանաւանդ բոլոր հայ եկեղեցիների ընդհանրական մայր Ս. Էջմիածնից, բայց ո՛չ Նոր Զելանդիայի մենութեանս և զրկուածութեանս վիճակում, այլ Նոր Աւարայրի դաշտում՝ Արցախում, Ստեփանակերտում ու այս աշխարհի ողջ հայութեան համար ազատութեան պայքարի ճակատում: Խոր դիշերուայ այս լուռ պահին, ես ինձ մտածում եմ... Քիչ անդին, Ղարաբաղի սահմանների վրայ հայ բանակի զինուորները այս տարապայման սառնամանիքի պայմաններում, տեղացող ու բրգացող ձիւնի ներքոյ հսկում են

---

* *Վեհափառ Հայրապետի այս խոսքը Արցախյան շարժման տասնամյակի օրերին լույս է տեսել առանձին գրքույկով:*

արթուն, կանգնել են առոյգ, որպէսզի խաղաղ ապրի ժողովուրդն Հայոց՝ իրենց "մայր ծնող"ը, իրենց «լաո»ն, որի համար լուռ երգում են «մրոնի՞մ քըզի...»:

Վարդանանց տոնը Արցախում...:

Բայց այս պահին, 19 փետրուարի այս ուշ գիշերին, ոչ ոք չի մտածում 451 թուի Աւարայրի ճակատամարտի մասին: Ամէն ոք էագրաւուած է Արցախեան ազատագրական պայքարի տասնամեակի յատուկ ապրումներով: Հայրեր ու մայրեր յիշում են իրենց զոհ տուած զաւակներին, նահատակի պսակով այժմ լուսաշրջանակուած: Այրիացեալ կանայք ու որբացեալ զաւակունք յիշում են իրենց ամուսիններին ու հայրերին: Շատերի ականջներում դեռ հնչում են հրասայլերի ահագնաձայն ու մահասփիւռ ռումբերի ու ականների սարսռադին սուր պայթիւնները, հրազէնների արագահարուածեան փամփուշտների սուլոցները: Ոմանց ականջները դեռ չեն ձերբազատուել լացի, ողբի սուր ճիչերից և սրտակեղեք հառաչանքներից: Պատերազմը դադարել է, բայց պատերազմի արձագանքը օդի մէջ է. ո՛չ ձիւնը, ո՛չ անձրևը, ո՛չ արևը չեն կարողացել ջնջել պատերազմի արհաւիրքը:

Բայց այդ բոլորի մտապատկերացումից աւելի խոր ես տեսնում եմ ոչ թէ մահը ու մահուան ստուերը, այլ՝ կեանքը իր եռուն կենդանապատկերով, մանաւանդ այստեղ այսօր համախմբուած երիտասարդ, տարազաւոր ու անտարազ, զինուորների վառ աչքերին և ցրտից կարծրացած դէմքերի կարշնեղ գծերի մէջ: Լևոն Շանթն ասել է.

«Կեանքն՝ ի՛ր ճամբով.
Մահն՝ ի՛ր ճամբով:»

Այժմ կեանքի՛ ճանապարհն է բացուել Արցախի ժողովրդի համար: Ես եկել եմ ոչ թէ մահը սգալու, այլ կեանքը ողջունելու և կեանքին իմ կեանքը խառնելու իմ պատասխանատուութեան և պարտաւորութեան հրամայականով, տարողութեամբ ու նկարագրով: Խոսեցի: Սովորական իմաստով խօսք չէր դա: Ո՛չ գրաւոր պատգամ, ո՛չ շարադրեալ դասախօսութիւն, ո՛չ ծրագրեալ քարոզ: Սրտիս բխումն էր, հազիւ զսպելի: Զգում էի, որ սրտոտ մարդկանց հետ էի, և չէի կարող տարբեր լինել:

Թանձր ձիւնն էր գետնին և մշուշը լցրել էր օդը, ցուրտը հարուածում էր մարմիններին: Ամպերն իջեր էին երկնքից երկիր: Ու միտքս գնաց այն միւս ամպերին, որոնք նստել են սրտերում և հոգիներում արեամբ ու քրտամբք ոռոգեալ այս հողի վրայ ապրող իմ եղբայրներին և քոյրերին: Այդ ամպերը դեռևս ամբողջական և վերջնական լուծում չգտած Արցախեան հիմնահարցի առաջացրած անորոշութեան գոյավիճակից են հաւաքուել և տարածուում են մինչև Հայաստան և մինչև աշխարհի չորս ծագերը և նոյնիսկ մինչև Նոր Զելանդիա, ուր ապրում են մատների վրայ համրուող հայեր...:

Շարունակում եմ ես ինձ հետ խոսել գէպի արշալոյս մատեցող գիշերի իմ անձնական մենութեան մէջ — ե՞րբ է եղել Հայոց աշխարհ առանց մութ ամպերի...: Մութ ամպերի հաւաքումն ու թանձրացումը երկնքում և մեր կեանքի շուրջ, յաճախ վեր է մնացել մեր կարողութեան սահմաններից, ինչպէս երկնքի ամպերը մարդկանց կամքերից: Մեր տարածաշրջանի պայմաններից են առաջացել նրանք, մեր դարաձիգ պատմութեան ողջ ընթացքում: Ամպերն յաճախ իջեր են ցած, մթագնել են մեր ներքին կեանքը և երբեմն էլ խռովել են մեր գոյութիւնը ներազգային պառակտումներով, անհարկի և ազդաքանդ բաժանումներով, հիւանդագին պատռուածքներով:

***

Քիչ առաջ թատերասրահի բեմի վրայ երգում էին, պարում էին պարմաններն ու պարմանուհիները: Տօնախմբում էին իրենց աղատ ու անկախ — ոչ միշտ խաղաղ ու ապահով — ապրելու տասնամեայ ազգային համայնական իրագործումը, իրենց աստուածատուր մարդկային ու ազգային իրաւունքների արդար վայելքը: Եւ ես իմ հոգու մէջ խորասոյզ, մինչ մի աչքով իրենց կայտառութեան տեսարանով եմ լցւում և ցնծում, միւս ակնալաքով իմ հոգու մէջ իջած երկնքին եմ նայում ու անձայն և անբարբառ առաքում եմ ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ.

— Տէ՛ր Ամենակալ, Ամենակարող և Ամենաբարի, Ամենատես և Ամենաղօր, Արարիչ և Բարեխնամող ողջ աշխարհին և Նոյեան տապանով այցելուած Քո Հայաստանին և յատկապէս Արցախեան այս լեռնաշխարհին վրայ, Քո ստեղծած արևից ցանի՛ր Քո ժպիտը, սփռի՛ր Քո ճառագայթները՝ սէր, հաւատք, յոյս, խաղաղութիւն, ոյժ, կորով, կամք, ջանք, աշխատանք, արիութիւն, տոկունութիւն, միութիւն և ամբողջականութիւն, յարատևութիւն և կենսապաշտութիւն անուններով, որպէսզի մնայ, աճի և ստեղծագործի Քո ստեղծած ժողովուրդը Քո ստեղծած ու հայի կեանքով ու հայակերպ դրոշմով կնքուած այս հողերի վրայ, ուր կայ բուրմունքը Քո զոյգ առաքեալների բերած օրհնեալ իւղին և մեր հաւատոյ-Հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի օրհնած Միւռոնին:

Դու ասացիր. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո»: Շնորհի՛ր մեզ, Տէ՛ր, օրեր խաղաղ և կեանք անվտանգ, որպէսզի կարողանանք մեր քրտինքը խառնել Քո հողին և կեանք դուրս բերել Քո հողից: Դու արիւն տուիր մեզ: Արիւնը տուիր կեանքի՛ն համար, ուրիշները մեր երակներից այն քամեցին մահուան համար: Աղաչում եմ, Տէր, թող արիւնը դադրի հոսելուց երակներից դուրս վասն մահուան: Թող նա հոսի — ու առատօրէն հոսի — երակների մէջ վասն կեանքի: Թող արիւնի ներքին հոսանքից քրտինք արտաբերուի, որպէսզի ոռոգուեն դաշտերն այս երկրի որպէս «վայրի դալարաւոջ», Քո իսկ շունչով գրուած բառերի համաձայն:

— Հայցում եմ, Տէ՛ր Ողորմած և Հայր Գթառատ, Քո անպարագրելի իմաստութեան կենսատու շնորհները արևի ճառագայթների նման ու առաւօտեան ցողի նրբաշաղ թափանցմամբ իջեցրու մեր բոլորի՝ Քո ձեռակերտ զաւակներիս, Թորգոմայ ազգի և Հայկեան ցեղի շառաւիղներիս մտքերում, սրտերում և հոգիներում: Խոհեմութեամբ և արիութեամբ դոտեպնդի՛ր Քո բոլոր պատասխանատու և ժողովրդի համար պարտաւորութիւններ ստանձնած անձերին՝ առաջնորդաց ազգիս Հայոց, հոգևորականաց և պետականաց, զօրապետաց և զօրականաց, քաղաքայնոց և շինականաց: Քո Միածին Որդու և մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի երկնահամ ու կենսաշէն բառերը թող մարմին զգենուն նրանց անձերի, կեանքերի և գործերի մէջ — «Ազնիւ ծառայ, բարի և հաւատարիմ»:

— Տէ՛ր ամենեցուն, ամենայն ազանց և ազգաց, պետութեանց և իշխանութեանց, արդարութեան լոյսը ցնցուղի՛ր բոլոր ազգերի առաջնորդների հոգիներում, յատկապէս մեր հայրենիքի՝ Մայր Հայաստանի և Արցախի դրացնութեան մէջ ապրող մեր եղբայրներին և քոյրերին: Լուսաւորի՛ր նրանց մտքերը, որպէսզի իմանան, որ իրենց հայ եղբայրներն ու քոյրերը ուրիշ ոչինչ ունեն, բայց միայն աղատ ու անկախ, խաղաղ ու

համերաշխ, կենսակից ու գործակից ապրելու կամք նոյն Աստուծոյ փառքին և Նրա ստեղծած նոյն և մէկ մարդկութեան բարիքին համար: Մեր սուրբ պատարագի բառերը փոխադրիր Քո բոլոր ժողովուրդների կեանքերում.

«Խաղաղութեան ձայն հնչեցաւ,

.....

Թշնամութիւնն հեռացաւ,

Սէրն յընդհանուր, սփռեցաւ...»:

— Ամենախնա՜մ Տէր, Տեսող ամենայնի և Կամեցող բարեաց, «յամենայն սրտէ իմմէ, յամենայն անձնէ իմմէ և յամենայն մտաց իմոց և յամենայն զօրութենէ իմմէ» հայցեմ ի քէն, հեղ ի վերայ ժողովրդեանս Հայոց որ ի Մայր Հայաստան, յԱրցախ և ի սփիւռս աշխարհի, Քո բազմապատիկ շնորհները, որպէսզի յստակ տեսնեն, ուղիղ իմանան, ճիշտ ըմբռնեն Քո երկնատուր ազատութեան իմաստն ու արժէքը այս նոր դարաշրջանում, որ բացուեց մեր պատմութեան հորիզոնի վրայ, այս դարի վերջին տասնամեակին: Թող անշեղ ու անսայթաք ընթանան ազատութեան և անկախութեան նորաբաց այս ճանապարհով, որ հարազատ ճանապարհն է Քո ստեղծած Հայութեան և ողջ մարդկութեան աստուածատեղծ բնութեան և աստուածատուր կեանքին:

Ընդունի՛ր, Տէր, ազօթքն այս հայցողական որպէս խունկ անուշաբոյր, ծուէն ծուէն Քեզի մատուցուած Քո ժողովրդի հաւատքով, յոյսով և սիրով մխացող սրտերից Արցախեան լեռնակառոյց այս բուրվառից:

***

Վարդանանց տօնն է այսօր: Եւ տօնն այս տարի ստացել է նոր անուն. Աւարայրեան բառի փոխարէն հագել է Արցախեան բառը, նոր ու վառ երանգով: Բայց ինչ որ անփոփոխելի և անփոխարինելի է՝ այդ հոգի՛ն է, որ շնչում է մեր կուրծքերի տակ՝ լինի Նոր Զելանտայում, լինի Արցախում, լինի ուրէ այլ տեղ այս աշխարհում:

Եւ «հոգին է կենդանարար...»:

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

19 փետրուար 1998
Ստեփանակերտ
Արցախ